Ձեր 09.04.2015թ. N 15/15.1/5771-15 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան։

Հարգանքով

**Վ. Միրումյան**

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 011.800.329

034/11539-15

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ապրիլի 2015 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(Այբ» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-15 և N 06/3-3/-15 եզրակացություն-ները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված FORD TRANSIT մակնիշի միկրոավտոբուսը (2012 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ NM0DXXTTRDCA00504, 18,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ԱՄ ՄԶՄ Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 3-ի Մ-1003-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

15.04.2015թ № 07/80-2/9200-1

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.04.2015թ. N 15/15.9/5906-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ավտոմեքենայի ներմուծման մասին («Այբ» կրթական հիմադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-438

034/11756-15
15.04.2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-010, Մելիք-Ադամյան 1.

մր-5/4.15

06/5-1/9367-15
16. 04. 2015թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.04.2015թ. N 15/15.9/5906-15 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ավտոմեքենայի ներմուծման մասին» որոշման նախագիծը («Այբ» կրթական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

**Վ. Միրումյան**

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 011.800.329

034/119947-15
16. 04. 2015թ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2015 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

մր 5/4.16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N -15 և ապրիլի -ի N -15, եզրակացությունները և հաշվի առնելով «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի 2015 թվականի ապրիլի 14-ի N 01-219 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող 2014-2015 թվականների զարգացման» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի ապրիլի 3-ի Մ-295-Ա որոշման խմբագրությամբ) ծրագիրը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռքբերված համակարգչային սարքավորումները և կահույքը (56,692 կգ ընդհանուր քաշով, 180,667 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Ռեկտոր Ա. Ռ. Դարբինյանի կողմից

«30» հունիսի 2015թ.

## Հայ-Ռուսական Համալսարանի 2014-2015 թվականների զարգացման ծրագիր (1 փուլ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակներն են՝<br>• Ժամանակակից գիտական ուղղությունների ու նորարարական մտքի զարգացումն ու Հայաստանում գիտական ազգային ռեսուրսի ստեղծումն ու ընդլայնումը:<br>• Հայաստանում բնագիտական ուղղությունների զարգացումը, այդ ոլորտում գիտական ներուժի մեծացումը:<br>• ՀՀ գիտության ինտեգրումը համաշխարհային գիտական և հետազոտական հանրությանը և միջազգային մակարդակում նշանակության բարձրացումը՝ ՀՌՀ և ՌԴ առաջատար գիտական կենտրոնների միջև համագործակցության միջոցով, որոնցից են Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, «ՄԻՖԻ» միջուկային հետազոտությունների ազգային ինստիտուտը, Սանկտ-Պետերբուրգի պետական պոլիտեխնիկական համալսարանը և այլն:<br>• Հայաստանում փորձնական և կիրառական գիտության, ինչպես նաև դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի և ինովացիոն տեխնոլոգիաների զարգացումը: |

2

| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարեգործական ոդակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ռուսաստանի Դաշնության կառավարություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան<br>ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփ Էմինի 123:<br>Բնագավառը՝ կրթություն և գիտություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ունի շարունակական բնույթ: Ներկայացվող առաջին փուլի բյուջեն կազմում է 55 000 000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ: Ծախսերի նախատեսվող ուղղություններն են.<br>- լաբորատոր սարքավորումներ – 28 742 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.<br>- ծրագրային ապահովման միջոցներ և տեխնիկական լուծումներ – 23 258 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.<br>- ծառայություններ և աշխատանքներ – 3 000 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ. |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողները, ասպիրանտները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 15 դեկտեմբեր 2014<br>Ծրագրի ավարտը՝ 30 հունիս 2015 |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ.-ի դեկտեմբերի 15-ից մինչև 2015թ.-ի հունիսի 30 ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1. **Տեսացրող զոնդային մանրադիտակի գնում (ներմուծում):**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսացրող զոնդային մանրադիտակի ձեռքբերման պայմանագիր: Տեսացրող զոնդային մանրադիտակի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 5.992.000 ռուբլուն համարժեք դրամ: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման ներմուծումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>2. **Ջերմային վառարանի գնում (ներմուծում):**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել ջերմային վառարանի ձեռքբերման պայմանագիր: Ջերմային վառարանի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.650.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>3. **Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումներ և համալրող սարքեր:**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերման |

Ա.Ա. 5/4.16



| | | |
|---|---|---|
| | | պայմանագիր: Սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 11.000.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>4. **Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների գնում:**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ձեռքբերման պայմանագիր: Տեսա և ձայնային տեխնիկայի ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.400.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>5. **Այլ լաբորատոր սարքավորումներ**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման պայմանագրեր: Այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Նախատեսվում է այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերում 16.100.000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր գումարի չափով:<br>6. **Այլ միջոցառումներ**<br>Նախատեսվում է իրականացնել 8.858.000 ռուբլուն համարժեք |

Ա.Ա. 5/4.16

| | | |
|---|---|---|
| | | դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. **Տեսացրող զոնդային մանրադիտակի ներմուծում:**<br>Տեսացրող զոնդային մանրադիտակը նախատեսված է մագնիսային հատկությունների ուսումնասիրության, կորերի վերլուծության, թունելային մեթոդով հետազոտությունների իրականացման համար: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 5.992.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>2. **Ջերմային վառարանի ներմուծում:**<br>Ջերմային վառարանը թույլ է տալիս իրականացնել բարձր ջերմաստիճանային (մինչև 2000°C) միջավայրի ստեղծում, ինչպես նաև այդ միջավայրում նյութերի ջերմամշակում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.650.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>3. **Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ներմուծում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված, հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերումը ուղղված է միջբուհական |



| | | |
|---|---|---|
| | | գիտակրթական համագործակցության ապահովման, ինչպես նաև արտասահմանյան կրթական լավագույն փորձի և նոր մոտեցումների ներդրմանը:<br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 11.000.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>4. **Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ներմուծում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված սարքավորումները նախատեսված են ուսումնական գործընթացի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) համար:<br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 6.400 000 ռուբլուն համարժեք դրամ:<br>5. **Այլ լաբորատոր սարքավորումների գնում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված այլ լաբորատոր սարքավորումները պետք է ծառայեն գիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների և վերլուծությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացին օժանդակելու և ուսանողներին գիտական գործընթացի մեջ ներգրավելու նպատակին: |

| | | |
|---|---|---|
| | | Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում 16.100.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>**6. Այլ միջոցառումներ:**<br>Նախատեսվում է իրականացնել 8.858.000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներկայացնել ընթացիկ և վերջնական ֆինանսական հաշվետվություններ ՌԴ Կրթության և գիտության նախարարություն, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա/Ն 5/4.16

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

13.04.2015թ. № 07/80-2/8984-15

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.04.2015թ. N 15/15.9/5596-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն հաշվի առնելով վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին 03.04.2015թ. N Մ-295-Ա որոշմամբ խմբագրված ծրագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետի 11,000,000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ սարքավորումների և համալրող սարքերի և 5-րդ ենթակետի 16,610,000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ գումարի չափով նախատեսված այլ լաբորատոր սարքավորումների նախահաշվային արժեքների և ծրագրի 10-րդ կետի միևնույն ենթակետերում նշված համապատասխանաբար 11,400,000 ՌԴ ռուբլի և 16,100,000 ՌԴ ռուբլի արժեքներով համանման ծախսատեսակներին չհամընկնելու, ինչպես նաև նույն ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նախատեսված համապատասխանաբար՝ 55,510,000 ՌԴ ռուբլի և 55,400,000 ՌԴ ռուբլի արժեքներով ծախսերի հանրագումարները միմյանց և ծրագրի բյուջեին

034/11529-15
13.04.2015թ.

(55,000,000 ՌԴ ռուբլի) չհամապատասխանելու հանգամանքը, առաջարկում ենք ծրագրում կատարել փոփոխություններ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-438

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-010, Մելիք-Ադամյան 1.

06/5-1/9000-15
14.04.2015թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.04.2015թ. N 15/15.9/5596-15 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագիծը («Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Միրումյան

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 011.800.329

034/11558-15
14.04.2015թ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված ծրագրում ձևփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան») որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն հաշվի առնելով վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին 03.04.2015թ. N Մ-295-Ա որոշմամբ խմբագրված ծրագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետի 11,000,000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ սարքավորումների և համալրող սարքերի և 5-րդ ենթակետի 16,610,000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ գումարի չափով նախատեսված այլ լաբորատոր սարքավորումների նախահաշվային արժեքների և ծրագրի 10-րդ կետի միևնույն ենթակետերում նշված համապատասխանաբար 11,400,000 ՌԴ ռուբլի և 16,100,000 ՌԴ ռուբլի արժեքներով համանման ծախսատեսակներին չհամընկնելու, ինչպես նաև նույն ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նախատեսված համապատասխանաբար՝ 55,510,000 ՌԴ ռուբլի և 55,400,000 ՌԴ ռուբլի արժեքներով ծախսերի հանրագումարները միմյանց և ծրագրի բյուջեին (55,000,000 ՌԴ ռուբլի) չհամապատասխանելու հանգամանքը, առաջարկում ենք ծրագրում կատարել փոփոխություններ: | Առաջարկությունը հաշվի է առնվել կցված է լրամշակված ծրագիրը: |
| | |
| | |


Министерство образования и науки РФ
Министерство образования и науки РА
Государственное образовательное учреждение
высшего профессионального образования
Российско-Армянский (Славянский) университет

РАУ

ՌԴ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Բարձրագույն մասնագիտական կրթության
պետական ուսումնական հաստատություն
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Армения, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123,
тел. (+374 10) 22-92-54, 27-70-52
факс: (+374 10) 28-97-01, 26-97-01

Հայաստան, 0051, ք. Երևան, Հ. Էմին 123,
հեռ. (+374 10) 22-92-54, 27-70-52
ֆաքս: (+374 10) 28-97-01, 26-97-01


«14» 04 2015г. № 01-219

ՀՀ Կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պրն. Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարության թիվ 07/80-2/8984-15 գրության ներկայացնում ենք Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի կողմից իրականացվող Զարգացման ծրագրի 1-ին փուլի հայտի լրամշակված տարբերակը:

Հարգանքով,
Ռեկտոր

Ա.Ռ. Դարբինյան

717

096-11691
14-04-15

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

___ ապրիլի 2015 թվականի N Մ - -Ա մր. 5/5.1

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-15 և ապրիլի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) ԱՄՆ-ի քաղաքացի Դիկրան Կերաղոսյանի հետ (անձնագիր՝ 467433707) 2014 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված՝ N 01-03.12.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բլոգի ստեղծման դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Նիդեռլանդների Թագավորության քաղաքացի Հանս Շուլթենբերգի հետ (անձնագիր՝ NYC437P33) 2015 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N 01-15.01.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրատպության դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Նիդեռլանդների Թագավորության քաղաքացի Դե Բոեր Գուիդոյի հետ (անձնագիր՝ NN47POL92) 2015 թվականի հունվարի 19-ին կնքված՝ N 01-19.01.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրատպության դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

մր. 5/5-1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

16.04.2015թ. № 07/80-2/9373-1.

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.04.2015թ. N 15/15.6/5846-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

034/11945-15
16.04.2015թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N: 06/3-3/9368-15
16.04.2015թ. մ.5/5.1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 10.04.2015թ. N15/15.6/5846-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
Հեռ 011-800329

034/11919-15
16.04.2015թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

մ.5/5.2

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2015 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլ -ի N 07/80-2/-15 և N 06/3-3/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀՎՀՀ 00006023)կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի մասին» N Մ-065-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս ՕիԼ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի ապրիլի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում «Ռեգուլյար» տեսակի բենզինի մատակարարում՝ 585,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Mr-5/5.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

15.04.2015թ № 07/80-2/9203-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.9/5780-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի N Մ-065-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ, 011 910-437

034/11750-15
15.04.2015թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

06/3-3/8839-15

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

11.04.2015թ

Mr-5/5.2

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 09.04.2015թ. թիվ 15/15.9/5780-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի N Մ-065-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/11378-15
11.04.2015թ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ապրիլի 2015 թվականի N Մ-       - Ա** Մ-5/5.3

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1209-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական հիմադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլ -ի N 07/80-2/-15 և N 06/3-3/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ 08417664) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի «Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում» N Մ-1209-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մայ Գարդեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03539587) 2015 թվականի ապրիլի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում ոռոգման համակարգի աշխատանքների մատուցում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Մ-5/5.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.   (+374 60) 700 255

15.04.2015թ. № 07/80-2/9341-15

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.9/5781-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N Մ-1209-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» որոշման նախագիծը (««Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամ»)» հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացված նախագծի վերնագիրը համապատասխանեցնել որոշման բովանդակությանը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ.. 011 910-437

034/11856-15
15.04.2015թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/9366-15
16.04.2015թ.
Ա-5/5.3

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.04.2015թ. N15/15.9/5781-15 գրությանը կից ներկայացված հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N Մ-1209-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» («Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեծանյան
011-800-329

034/11948-15
16.04.2015թ.

Ա-5/5.3

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N Մ-1209-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացված նախագծի վերնագիրը համապատասխանեցնել որոշման բովանդակությանը: | Որոշման նախագիծը խմբագրվել է: |
| | |
| | |

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2015 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

Մ-5/5.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/ -15 և ապրիլի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Միասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2015 թվականի մարտի 25-ին կնքված N 1TM/KA պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սելեկտիվ անցումային համակարգի սարքերի մատակարարում՝ 1,362,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գայսաթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03313002) 2015 թվականի մարտի 16-ին կնքված N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազատարի վերատեղադրման աշխատանքների իրականացում՝ 888,287 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

Մ-5/5.4

3) «Էկոմիքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255701) 2015 թվականի մարտի 20-ին կնքված N ԿԱ-ԾՏԱՊՁԲ-15/06-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 1,166,883 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մավշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08911644) 2015 թվականի մարտի 20-ին կնքված N ԵՔԿԱ-ԾՏԱՊՁԲ-15/06-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 1,851,385 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԺԲ 5/5.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.04.15 № 07/80-21

Ձեր № 9097-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.04.2015թ. N 15/15.1/5603-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ, 011 910-437

034/11601-15

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/9001-15
14.04.15 ԺԲ 5/5.4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.04.2015թ. N15/15.1/5603-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/11542-15

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ապրիլի 2015 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7312-15 և մարտի 24-ի N 06/3-3/6725-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1066-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1311-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կերխեր Սերվիս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00414415) հետ 2015 թվականի ապրիլի 8-ին կնքված N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրման և էմուլսապատման աշխատանքների իրականացում՝ 2,144,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.04.15 № 70/80-2ֆ

Ձեր № 9100-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.1/5658-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

024/11606-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/8827-15
11.04.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

մր.5/5.5

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.04.2015թ. N15/15.4/5658-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/11359-15

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2015 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

մր.5/5.6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք՝ ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/ -15 և ապրիլի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 23-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-1059-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1274-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-162-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-241-Ա և 2015 թվականի ապրիլի 3-ի N Մ-327-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01533025) 2015 թվականի ապրիլի 8-ին կնքված N 12/Մ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե սալիկների մատակարարում՝ 4,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

մր. 5/5.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

16.04.15 № 07/80-21

Ձեր № 9379-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.04.2015թ. N 15/15.1/5898-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1059-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. . 011-910-437

034/11946-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/9006-15
14.04.15
մր. 5/5.6

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 10.04.2015թ. թիվ 15/15.1/5898-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1059-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/11557-15

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2015 թվականի N Մ - - Ա** մր. 5/5.7
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1238-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 13-ի N 07/80-2/5864-15 և մարտի 11-ի N 06/5-1/5631-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 01503283) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն» ծրագրի մասին» N Մ-1238-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սպեցմաշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06947049) 2015 թվականի ապրիլի 7-ին կնքված N SP04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ԲՄ14 շաքացանի ձեռքբերում՝ 3,622,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

մր. 5/5.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

______________ № ______________

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.1/5662-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1238-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հրակից գործարքի մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ.. 011 910-437

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/8821-15
11.04.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Մ 5/5.7

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.04.2015թ. N15/15.4/5662-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1238-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հրակից գործարքի մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

034/11357-15

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2014 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

Մ 5/5.8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/ -15 և ապրիլի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված՝ N 115080665/S4004012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի փետրվարի 4-ին կնքված շարժական կապի ծառայությունների մատուցման N 04/02/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի հունվարի 25-ին կնքված N 230834 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Նորդ Ավենյու» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 01555764) 2014 թվականի մարտի 1-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կոմունալ ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված N 02-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Բյուրեղ» ջրի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548908) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված N 01/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը է թղթի և գրենական պիտույքների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված N 02/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տպագրական աշխատանքների իրականացում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված N 03/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նյութերի տպագրում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված N 04/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ապրանքների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Սի Փի Էս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված N 05/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բենզինի և դիզելային վառելիքի մատակարարում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2013 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2014 թվականի փետրվարի 11-ի N 01 համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման աշխատանքների իրականացում՝ 7,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Յուքոմ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2013 թվականի նոյեմբերի 21-ին կնքված N 022/21/11/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Նոյան տապան» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 02514983) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված N 06/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը թղթի, գրենական պիտույքների և գրքերի ձեռքբերում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) քաղաքացի Նոնա Ղարաբաղցյանի հետ (անձնագիր սերիա AH 0377601, տրված 15.05.2007թ., 040-ից) 2010 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը անշարժ գույքի վարձակալում՝ 19,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

15) «Իրրիգեյշն սիստեմս ֆոր ագրիկալչեր էնդ լենդսկեյփ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 01249372) 2015 թվականի մարտի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի դպրոցի տարածքում ջերմատան կառուցում՝ 1,764,610 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2015 թվականի մարտի 23-ին կնքված N 1142719 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 25-ին միջոցառման կազմակերպում՝ 195,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ապրիլի 11-ից մինչև հունիսի 30-ը ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի համար խաղահրապարակի պարագաների պատրաստում և տեղադրում՝ 980,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

——— 2015 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-330-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/ -15 և ապրիլի 15-ի N 6/3-3/9235-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, քաղ. Երևան, Արմավիրի մարզ, գյուղՊտղունք, Վարդանանց 1, ՀՎՀՀ՝ 01557357) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի փետրվարի 27-ին կնքված՝ N 820243 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 083021510417 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N 06/3-3/9235-15
15.04.15թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.04.2015թ. N15/15.4/5871-15 գրությանը կից ներկայացված հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Համաձայն «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի 09.04.2015թ N214 գրության, ««Մայրատուն» բարգործական ծրագրի իրականացման շրջանականերում հիմնադրամի կոմունալ ծախսերը կազմում են ամսական 200.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ խմբագրել որոշման նախագիծը:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳԱՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

N034/11748-15
15.04.15թ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 ապրիլի 2015 թվականի N Մ- -Ա** Ժ. 5/5.10

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի ապրիլի 8-ի N ԱԿ/15/3884-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 14-ի N 07/80-2/9148-15 ու ապրիլի 11-ի N 06/3-3/8755-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոկատոր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00095651) 2015 թվականի մարտի 27-ին կնքված՝ N ԳՀ ԲԸԱՀԾՁԲ-15/4 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է շարժական օբյեկտների մոնիթորինգային ծառայությունների մատուցում՝ 120,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ժ. 5/5.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.04.15թ № 07/80-2/9148-

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.4/5697-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

N034/11657-15
14.04.15թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N 06/3-3/8755-15
11.04.15թ
Մ-5/5.10

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 09.04.2015թ. թիվ 15/15.4/5697-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

N 034/11273-15
11.04.15թ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**17 ապրիլի 2015 թվականի N Մ-        - Ա** Մ-5/5.11
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի ապրիլի 8-ի N ԱԿ/15/3885-15 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 14-ի N 07/80-2/9146-15 և ապրիլի 14-ի N 06/3-3/9137-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» ծրագրի մասին» N Մ-068-Ա (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) և 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Վիններ Թայերս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 01558866) 2015 թվականի մարտի 27-ին կնքված N ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-11/6-2015/9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվադողերի գնում՝ 352000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի (176,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և 176,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.04.15թ №07/80-2/9146-15

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.4/5700-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի Մ-068-Ա և 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

N 034/11655-15
14.04.15թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N 06/3-3/9137-15
14.04.15թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.04.2015թ. N15/15.4/5700-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվա-կանի հունվարի 31-ի Մ-068-Ա և 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին» («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն») որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բաժանյան
011-800-329

N 034/11667-15
14.04.15թ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ար. 5/5.12

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

— —— 2015 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-503-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 14-ի N 07/80-2/9098-15 ու ապրիլի 11-ի N 06/3-3/8838-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի ապրիլի 10-ի N ԱՄ/22.2/3936-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-503-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-247-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԻ ՓԻ ԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի մարտի 31-ին կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՏԴՊԱԿ-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի գնում՝ 5,850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ար. 5/5.12

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.04.15թ №07/80-2/9098

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.04.2015թ. N 15/15.4/5657-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի N Մ-503-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ.. 011 910-437

N 034/11609-15
14.04.15թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N 06/3-3/8838-15
11.04.15թ. մր 5/5.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.04.2015թ. N15/15.4/5657-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի N Մ-503-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմինների վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

N 034/11375-15
11.04.15թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

մր 5/5.12

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

10.04.15թ N 26Ս/22.2/3936-15

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2015 թվականի ապրիլի 09-ի թիվ 15/15.4/5657-15 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի N Մ-503-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

N 020/11100-15
10.04.15թ

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ փետրվարի 2015 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

մ.-5/6.1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-201-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-15 և ապրիլի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հացցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-201-Ա որոշման 1-ին կետում «37,954 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «65,794 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

մ.-5/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

16.04.2015թ. N 07/80-2/9374-15

Ձեր N ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.04.2015թ. N 15/15.6/5851-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-201-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-438

034/11916-15
16.04.2015թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

___ ապրիլի 2015 թվականի N Մ-          -Ա
քաղ. Երևան

Մ-5/6.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2015 թվականի ապրիլի 13-ի N 028 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» N Մ-202-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «54 կգ» բառերը փոխարինել «57 կգ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:


**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**«TASHIR» CHERITABLE FUND**

ՀՀ, ք. Երևան, Խորենացու փողոց 33
Հեռ:      (3741)-54 53 05
Հեռ/ֆաքս: (3741)-545435

Khorenatzi st. 33, Yerevan, 375010, RA
Tel:      (3741)-54 53 05
Tel/Fax: (3741)-545435


*№ 028*

«13» ապրիլի 2015թ.

Մ-5/6.2

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
Համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում եմ Ձեզ, համապատասխան մաքսային ձևակերպման ժամանակ պարզվել է, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի № Մ-202-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների փաստացի քաշը կազմում է 57 կգ:

Խնդրում եմ վերոնշյալ որոշման մեջ կատարել փոփոխություն:

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի տնօրեն          Ա. Վարոսյան

714

094-11513
13 04 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ար. 5/6.2

13 մարտի 2015 թվականի N Մ-202-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 4-ի N 07/80-1/4916-15 և մարտի 4-ի N 06/18-4/4944-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) օդորակիչ սարքավորումներ և դրանց ամրակայման մասեր՝ 8 տեղ, 2,291.76 կգ ընդհանուր քաշով, 27,849.64 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ.

2) օդորակիչ սարքավորումներ՝ մեկ տեղ, 253 կգ ընդհանուր քաշով, 4,234 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ.

3) օդորակիչ սարքավորումների մասեր՝ մեկ տեղ, 54 կգ ընդհանուր քաշով, 3,494.40 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ար. 5/6.3

___ ապրիլի 2015 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-209-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2015 թվականի ապրիլի 15-ի N 17 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-209-Ա որոշման 1-ին կետի առաջին ենթակետում «ամսական 1,998,000 դրամի չափով» բառերը փոխարինել «1,998,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ARMENIA TREEPROJECT

Հայաստան Ծառատունկ Ծրագիր | Armenia Tree Project
«Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ | ATP Charitable Foundation

15 ապրիլի, 2015թ.
N 17

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Խնդրում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-209-Ա որոշման 1-ին կետի 1-ոդ ենթակետում կատարել փոփոխություն՝ «ամսական 1,998,000 դրամի չափով» բառերը փոխարինելով «1,998,000 դրամի չափով» բառերով:

Առդիր 1 թերթ:

Հարգանքով,

Գործադիր տնօրեն՝ Թոմաս Ջոն Գարաբեդյան

094-11876
15 04 15



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-209-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 3-ի N 482E-8E60-C840-15 և փետրվարի 12-ի N 06/3-3/2758-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-681-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N 10148, սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 000869, 2012 թվականի մայիսի 16-ին կնքված N 000137 և 2014 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 390621 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ ամսական 1,998,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» («Գազպրոմ Արմենիա») ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 018.08.13.2952 և օգոստոսի 1-ին կնքված՝ N 03308134962 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2015

թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում՝ 1,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 112750683 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 27,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 113293923 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 5,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2011 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N 1491847 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 90,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2014 թվականի մարտի 11-ին կնքված՝ N 2682296 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական ինտերնետ կապի ծառայությունների մատուցում՝ ամսական 10,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2013 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ N J414-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 19 լիտր և 12 լիտր տարողությամբ տարաներով խմելու ջրի մատակարարում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ԳԻԼԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02602113) 2015 թվականի հունվարի 23-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների հարակից սարքերի և պարագաների ու ծրագրերի մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ապրիլի 2015 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-352-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլ -ի N 07/80-2/-15 և N 06/3-3/-15 եզրակացությունները, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի ապրիլի 8-ի N 233 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Արարկիր եկեղեցու շինարարական աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-352-Ա որոշման 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «1479016.24 դրամի չափով» բառերը փոխարինել «1,479,016,240 դրամի չափով» բառերով, և նույն որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հունվարի 15-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ա. 5/6.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

16.04.2015 № 07/80-2/9378-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.04.2015թ. N 15/15.9/5819-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-352-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծում ամրագրել նաև վերը նշված որոշման 2-րդ կետի 2-րդ պարբերությունում նշված «1479016.24» թիվը «1479016240» թվով փոխարինելու մասին դրույթը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

034/11941-15
16.04.2015թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/8836-15
11.04.2015թ.
Ա. 5/6.4

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 10.04.2015թ. թիվ 15/15.9/5819-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-352-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/11373-15
11.04.2015թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2015 թվականի N Մ-      -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-225-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-15 և ապրիլի -ի N 06/3-3/-15 եզրակացությունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի ապրիլի 8-ի N 234 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանից Գանձատուն տանող ճանապարհի առաջին հատվածի կառուցում» ծրագրի մասին» N Մ-225-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «28,157,740 դրամ» բառերը փոխարինել «29,784,760 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «01 ապրիլ 2015 թ.» բառերը փոխարինել «01 հունիս 2015 թ.» բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-352-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երակարաձգելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի հետ, առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծում ամրագրել նաև վերը նշված որոշման 2-րդ կետի 2-րդ պարբերությունում նշված «1479016.24» թիվը «1479016240» թվով փոխարինելու մասին դրույթը: | Առաջարկությունը հաշվի է առնվել որոշման նախագիծը խմբագրվել է: |
| | |
| | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-5/6.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

16.04.2015թ. № 07/80-2/9371-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.04.2015թ. N 15/15.9/5850-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-225-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ.. 011 910-437

034/11952-15
16.04.2015թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/8824-15

Ա-5/6.5 11.04.2015թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 10.04.2015թ. թիվ 15/15.9/5850-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-225-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/11358-15
11.04.2015

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ապրիլի 2015 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1026-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-226-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 2-ի N 07/80-2/-15 և ապրիլի ի N 06/3-3/-15 եզրակացությունները և հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2015 թվականի ապրիլի 3-ի N 192 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագրի մասին» N Մ-1026-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի «238,808,517 դրամ» բառերը փոխարինել «209,480,142 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարել մասին» N Մ-226-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի կողմից
03. 04. 2015թ.

«Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը | Դեղորայքի ընդունման հետևողականության բարելավումը՝ուղղված տուբերկուլոզով (այսուհետ՝ ՏԲ) հիվանդների բուժման արդյունավետության բարձրացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ, Ժնև, Շվեյցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ ողջ տարածքով, հանրային առողջապահական ոլորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 209 480 142 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ բոլոր մարզերի ՏԲ հիվանդներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,ահրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում՝ըստ ուղղությունների, նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br>1. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով սոցիալական աշխատողների համար կրթական միջոցառումների իրականացում՝<br><br>Մատակարար կազմակերպությունն իր հիմնական անձնակազմի միջոցով Երևան քաղաքի և ՀՀ մարզերի թվով 40 սոցիալական աշխատողների վերապատրաստել է՝ ռեզիստենտ ՏԲ և դեղորայքակայուն ՏԲ (այսուհետ՝ ԴԿՏԲ)հիվանդների բուժման հետևողականությանն բարձրացմանն ուղղված սույն առաջարկով նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման համար: Դասընթացներն իրականացվել են 2014 թվականի դեկտեմբերին, թվով երկու երկօրյա դասընթաց:<br><br>Բյուջեն կազմել է 567 980 դրամ:<br><br>**2. Սոցիալական աշխատողների կողմից իրականացվող կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ**<br><br>Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ամիսը չորս անգամ 40 սոցիալական աշխատողների կողմից իրականացվել են և իրականացվելու են կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ ամբուլատոր բուժման փուլում գտնվող ռեզիստենտ ՏԲ և ԴԿ-ՏԲ հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար հանրապետության ողջ տարածքում :<br><br>Աշխատանքները ներառում են՝<br>1.1 Սոցիալական աշխատողների այցելություններ հիվանդների տուն՝ նրանց կենցաղային պայմաններին ծանոթանալու, հիվանդների ու նրանց ընտանիքի անդամներին ՏԲ հիվանդության վերաբերյալ ուսուցանելու, ՏԲ-ն լուսաբանող տեղեկատվական նյութերի հատկացման նպատակով՝ տվյալ հիվանդի բուժման ընթացքում առնվազն մեկ անգամ: Աշխատանքների արդյունքում ընտանիքի անդամները կծանոթանան ՏԲ- |



| | | |
|---|---|---|
| | | ից պաշտպանման միջոցներին, հիվանդի նկատմամբ ցուցաբերվող վարքին և հիվանդի նկատմամբ խարանի վերացմանը:<br><br>Սոցիալական աշխատողները ապահովվում են պաշտպանիչ միջոցներով՝ ձեռքերի մշակման թաց անձեռոցիկներ, սպիրտային զնիկներ, պաշտպանիչ գելեր:<br><br>Բյուջեն՝ 18 431 603 ՀՀ դրամ<br><br>1.2 Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ՏԲ հիվանդների համար կրթական միջոցառումների կազմակերպումը, որը կիրականացվի սոցիալական աշխատողների կողմից՝ հավասարը հավասարին սկզբունքով: Դասընթացները կիրականացվեն այն ՏԲ կաբինետներում, որտեղ հիվանդները ստանում են իրենց ամբուլատոր բուժման փուլը: Յուրաքանչյուր եռամսյակ կիրականացվի 1.5 ժամ տևողությամբ 12 դասընթաց, կամ ընդհանուր առմամբ 48 դասընթաց 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ. հունիսն ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր խումբ բաղկացած կլինի առավելագույնը 10 հիվանդից: Մասնակիցները կապահովվեն թեթև սննդով և գրենական պիտույքներով:<br><br>Բյուջեն՝ 856 626 ՀՀ դրամ<br><br>**3. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ՏԲ հիվանդներին սննդային փաթեթների բաշխում /քրեակատարողական հիմնարկներում/**<br><br>Սոցիալական աջակցություն է տրամադրվում քրեակատարողական հիմնարկներում գտնվող բոլոր ՏԲ հիվանդներին (առավելագույնը՝ 40 հիվանդ յուրաքանչյուր շաբաթ): |

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր ՏԲ հիվանդները ծրագրի իրականացման ընթացքում, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, շաբաթական մեկ անգամ ստանում են սննդային փաթեթներ հետևյալ բաղադրությամբ՝

1) Պահածոյացված միս - առնվազն 400գ
2) Թթվասեր և կաթնաշոռ - առնվազն 300գ (10 % յուղայնության, տուփով)
3) Կարագ - առնվազն 200գ (սերուցքային, տուփով )
4) Կաթ - մեկ լիտր (պաստերացված, առանց կոնսերվանտների և հակաբիոտիկների, յուղայնությունը 2.5 կամ 3.2%)
5) Պանիր «Լոռի» տեսակի - առնվազն 300գ
6) Բանան կամ կիվի - առնվազն 500գ
7) Նարինջ - առնվազն 500գ (կամ համարժեք չոր միրգ):

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր ՏԲ հիվանդներին տրամադրվող սննդային փաթեթների քանակի տատանումը կախված է նշված ժամանակահատվածում այդ վայրերում բուժվող հիվանդների թվի հնարավոր տատանումից:

Սոցիալական աջակցության ենթակա ՏԲ հիվանդների անվանացանկերը մատակարար կազմակերպությանը տրամադրվում են համապատասխան կազմակերպությունների ղեկավարության կողմից:

**Բյուջեն՝ 4 032 000 ՀՀ դրամ**

Ծրագրի իրականացման առաջին եռամսյակի ընթացքում, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում, շաբաթը մեկ անգամ թարմ սննդային փաթեթներ են տրամադրվել նաև ստացիոնար փուլում գտնվող դեղորայքակայուն ՏԲ հիվանդներին:

Նշված ժամանակահատվածում թարմ սննդային փաթեթների համար նախատեսված բյուջեն՝ 3 287 178 դրամ

Ա-5/6.6



4. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում /ամբուլատոր բուժման փուլում/

Սոցիալական աջակցություն է տրամադրվում բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (75% DOT) ամբուլատոր պայմաններում բուժվող ԴԿՏԲ հիվանդներին ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014թ հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ամիսը մեկ անգամ:

Ամբուլատոր պայմաններում բուժվող բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (առնվազն 75% ԴՈԹ) ԴԿՏԲ հիվանդները յուրաքանչյուր ամիս կստանան 2 սննդային փաթեթ և 1 հիգիենիկ փաթեթ (տվյալ ծառայության համար չափման միավոր է հանդիսանում հիվանդ/փաթեթը, որի 1 միավորը ներառում է վերը նկարագրված սխեմայով հիվանդին մեկ ամսվա ընթացքում տրվող մեկ անգամ հիգիենիկ և երկու անգամ տրվող սննդային փաթեթները):

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)
2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
6) Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
8) Պահածոյացված միս - 400գ
9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Ա-5/6.6

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
2) Օճառ - 4 հատ (ձեռքի)
3) Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)
4) Մաքրող փոշի –500գ (քլոր պարունակող)
5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
6) Ատամի մածուկ - 50 մլ
7) Խոզանակ ատամի - 1հատ

Բյուջեն՝ 38 297 958 ՀՀ դրամ

ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության բաշխման համար նախատեսված բյուջեն, վառելիքի ծախսը ներառյալ, կազմում է 3 262 500 ՀՀ դրամ:

**5. Դեղակայուն ՏԲ հիվանդներին դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյութերի տրամադրում**

ԴԿՏԲ հիվանդները (տուբերկուլոզային կաբինետներում կամ տանը) դեղորայքի ընդունման յուրաքանչյուր օրվա համար, ամիսը 26 օր, ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014թ հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ստանում են բնական հյութ դեղորայքի տոքսիկ ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Մեկ հիվանդին օրական տրամադրվում է 400մլ բնական հյութ՝ տեղական արտադրության: Հիվանդներին տրամադրվող հյութի քանակը հաշվարկելիս հաշվի կառնվի նաև հիվանդի առնվազն 75% ԴՈԹ- ի ապահովումը:

Բյուջեն՝ 8 564 468 ՀՀ դրամ

**6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՈԹ ռազմավարության շրջանակներում**



**տրանսպորտային ծախսերի փոխհատուցում**

ԴԿՏԲ հիվանդները ամեն օր (շաբաթական 6 օր,ամիսը 26 օր) դեղորայքը ընդունում են բուժաշխատողների (բուժքույրերի) անմիջական վերահսկողության տակ (ԴՈԹ) պոլիկլինիկաներում կամ տանը:

Հիվանդները, որոնք այցելում են ՏԲ կենտրոններ և ընդունում են դեղորայքը բուժաշխատողների ուղղակի վերահսկողության տակ ծրագրի իրականացման ողջ ընթացքում ստանում են իրենց ճանապարհածախսին (միջմարզային կամ միջքաղաքային՝ հասարակական տրանսպորտի կիրառմամբ) համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը՝ 400 դրամ: Այն դեպքում, երբ հիվանդը առողջական վիճակից ելնելով, ֆիզիկապես ի վիճակի չէ այցելել ԴՈԹ կենտրոն, նրան այցելում է ՏԲ կաբինետի բուժքույրը՝ ԴՈԹ իրականացնելու նպատակով: Մատակարար կազմակերպության կողմից վերոնշյալ չափով փոխհատուցվում է նաև բուժքրոջ ճանապարհածախսը: Հիվանդների որոշ մասը կարող են փոխհատուցվել օրական 2 անգամ՝ կախված հավելյալ ԴՈԹ ընդունման անհրաժեշտությունից: Մատակարար կազմակերպության պատասխանատուն ՏԲ կաբինետի բժշկի հետ համատեղ որոշում են ճանապարհածախսի փոխհատուցման ենթակա բուժքույրերի և հիվանդների ցուցակները:

Բյուջեն՝ 10 214 450 ՀՀ դրամ

**6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՈԹ ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում**

Հիվանդները, որոնք այցելում են ՏԲ կենտրոններ և ընդունում են դեղորայքը բուժաշխատողների ուղղակի վերահսկողության տակ ծրագրի իրականացման ողջ ընթացքում ստանում են իրենց ճանապարհածախսին (միջմարզային կամ միջքաղաքային՝ հասարակական տրանսպորտի կիրառմամբ) համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը՝ 400 դրամ շաբաթական 6 օր, ամիսը 26 օր: Այն դեպքում, երբ հիվանդը առողջական վիճակից ելնելով, ֆիզիկապես ի վիճակի չէ այցելել ԴՈԹ կենտրոն, նրան

այցելում է ՏԲ կաբինետի բուժքույրը՝ ԴՈԹ իրականացնելու նպատակով: Մատակարար կազմակերպության կողմից վերոնշյալ չափով փոխհատուցվում է նաև բուժքրոջ ճանապարհածախսը: Հիվանդների որոշ մասը կարող են փոխհատուցվել օրական 2 անգամ՝ կախված հավելյալ ԴՈԹ ընդունման անհրաժեշտությունից:
Մատակարար կազմակերպության պատասխանատուն ՏԲ կաբինետի բժշկի հետ համատեղ որոշում են ճանապարհածախսի փոխհատուցման ենթակա բուժքույրերի և հիվանդների ցուցակները:

Բյուջեն՝ 14 480 600

7. **Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ձմռան 3.5 ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում**

Ամբուլատոր բուժման փուլում գտնվող ԴԿ ՏԲ հիվանդների 50%- ը ստանում են ջեռուցման ծախսերի փոխհատուցում՝ ձմեռային ամիսների համար, ամսական 15.000 դրամի չափով 2014թ նոյեմբեր (կես ամիս), դեկտեմբեր, 2015թ հունվար, փետրվար ամիսների (ընդհանուր առմամբ 3,5 ամիս) մեջ ընկած ժամանակահատվածի համար: Փոխհատուցման ենթակա հիվանդների ցանկը որոշվում է մատակարար կազմակերպության պատասխանատուի և սոցիալական աշխատողների հետ համատեղ տվյալ ՏԲ կաբինետի սպասարկման տարածքում ապրող ԴԿ-ՏԲ հիվանդների սոցիալական վիճակի գնահատման հիման վրա: Փոխհատուցման ենթակա հիվանդների ցանկերը համաձայնեցվում են նաև "Տուբերկուլոզի ազգային կենտրոնի" հետ: Ընդգրկվելու են նաև բուժումը ձախողած հիվանդները:

Բյուջեն՝ ՀՀ դրամ 5 752 500

8. **Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեզիստենտ ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում**

ա.5/6.6



Բուժման լավ հետևողականություն ցուցաբերած ռեզիստենտ ՏԲ հիվանդները բուժման ընթացքում,ծրագրի իրականացման ընթացքում, 2014թ հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, յուրաքանչյուր ամիս ստանում են մեկական սննդային և մեկական հիգիենիկ փաթեթ, տվյալ ծառայության համար չափման միավոր է հանդիսանում հիվանդ-փաթեթը, որն իր մեջ ներառում է մեկ հիվանդին տրված մեկ սննդային և մեկ հիգիենիկ փաթեթը:

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)
2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
6) Ռսպ - 0.5կգ (փաթեթավորված)
7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
8) Պահածոյացված միս - 400գ
9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
2) Օճառ - 4 հատ (ձեռքի)
3) Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)
4) Մաքրող փոշի –500գ (քլոր պարունակող)
5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
6) Ատամի մածուկ - 50 մլ
7) Խոզանակ ատամի - 1հատ

ա.5/6.6

| | | |
|---|---|---|
| | | **Բյուջեն ՝ 57 594 289**<br><br>9. Ռեգուլյար ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության բաշխման համար նախատեսված բյուջեն, վառելիքի ծախսը ներառյալ, կազմում է **9 787 500 ՀՀ** դրամ:<br><br>10. Կազմակերպչական և պահպանման ծախսեր 34 350 490 ՀՀ դրամ , որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի, կոմունալ և այլ ծախսեր: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **1. Ռեգուլյար ՏԲ հիվանդի մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝**<br><br>1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)<br>2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)<br>3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)<br>4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)<br>5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)<br>6) Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)<br>7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)<br>8) Պահածոյացված միս - 400գ<br>9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)<br><br>**1 փաթեթի արժեքն է՝ 9 000 ՀՀ դրամ**<br><br>**2. Ռեգուլյար ՏԲ հիվանդի մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն** |



| | | |
|---|---|---|
| | | **պարունակությունը հետևյալն է՝**<br><br>1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ<br>2) Օճառ - 4 հատ (ձեռքի)<br>3) Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)<br>4) Մաքրող փոշի –500գ (քլոր պարունակող)<br>5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)<br>6) Ատամի մածուկ - 50 մլ<br>7) Խոզանակ ատամի - 1հատ<br><br>**1 փաթեթի արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ**<br><br>**Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 57 594 289 ՀՀ դրամ:**<br><br>**3. Քրեակատարողական հիմնարկներում գտնվող ՏԲ հիվանդներին տրամադրվող 1 փաթեթի պարունակությունը հետևյալն է՝**<br><br>1) Պահածոյացված միս - առնվազն 400գ<br>2) Թթվասեր+կաթնաշոռ - առնվազն 300գ (10 % յուղայնության, տուփով)<br>3) Կարագ - առնվազն 200գ (սերուցքային, տուփով )<br>4) Կաթ - մեկ լիտր (պաստերացված, առանց կոնսերվանտների և հակաբիոտիկների, յուղայնությունը 2.5 կամ 3.2%)<br>5) Պանիր Լոռի - առնվազն 300գ<br>6) Բանան կամ կիվի - առնվազն 500գ<br>7) Նարինջ - առնվազն 500գ (կամ համարժեք չոր միրգ):<br><br>**1 փաթեթի արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ**<br><br>**Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 4 032 000 ՀՀ դրամ:**<br><br>**4. ԴԿ ՏԲ հիվանդի մեկ սննդային փաթեթի նվազագույն** |

| | | |
|---|---|---|
| | | պարունակությունը հետևյալն է՝<br><br>1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)<br>2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)<br>3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)<br>4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)<br>5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)<br>6) Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)<br>7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)<br>8) Պահածոյացված միս - 400գ<br>9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)<br><br>1 փաթեթի արժեքն է՝ 9 000 ՀՀ դրամ<br><br>**5. ԴԿ ՏԲ հիվանդի մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝**<br><br>1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ<br>2) Օճառ - 4 հատ (ձեռքի)<br>3) Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)<br>4) Մաքրող փոշի –500գ (քլոր պարունակող)<br>5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)<br>6) Ատամի մածուկ - 50 մլ<br>7) Խոզանակ ատամի - 1հատ<br><br>1 փաթեթի արժեքն է՝ 4 000ՀՀ դրամ<br>Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 38 297 958 ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| | | 6. Մեկ հիվանդին մեկ օրվա համար նախատեսվում է տրամադրել՝<br><br>- Հյութ բնական 200մլ X 2= 400 մլ<br><br>1 միավորի արժեքն է 122, 00 ՀՀ դրամ:<br>Ընդհանուր հեղուկների արժեքն է՝ **8 564 468 ՀՀ** դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր **34 350 490 ՀՀ** դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի, կոմունալ և այլ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների | Առողջապահության նախարարություն, Տուբերկուլոզի Ազգային Կենտրոն, <<Բժիշկներ առանց սահմանի>> կազմակերպություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսեկան, ավարտական հաշվետվություններ պատվիրատուին՝ Առողջապահության նախարարությանը: Կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր պատվիրատուի, ինչպես նաև Գլոբալ Հիմնադրամի տեղային գործակալի կողմից:<br>Նախատեսվում է հաշվետվություն ներկայացնել նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից իրականացվելու է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում կատարվող գործողությունների անմիջական վերահսկում: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-5/6.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

13.04.2015թ. № 07/20-2/8988-15

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.04.2015թ. N 15/15.9/5498-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2015 թվականի մարտի 13-ի N Մ-226-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում նշված ֆինանսական միջոցների ծավալը (206,217,642 դրամ) և ծրագրի 6-րդ կետում նախատեսված ծրագրի բյուջեն (209,480,142 դրամ) համապատասխանեցնել միմյանց:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ.. 011 910-437

034/11531-15
13.04.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

06/3-3/8756-15

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

11.04.2015թ.
Ա-5/6.6

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.04.2015թ. N15/15.9/5498-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2015 թվականի մարտի 13-ի N Մ-226-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/11272-15
11.04.2015թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2015 թվականի մարտի 13-ի N Մ-226-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| Որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում նշված ֆինանսական միջոցների ծավալը (206,217,642 դրամ) և ծրագրի 6-րդ կետում նախատեսված ծրագրի բյուջեն (209,480,142 դրամ) համապատասխանեցնել միմյանց: | Նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում նշված ֆինանսական միջոցների ծավալը համապատասխանում է ծրագրի 6-րդ կետում նախատեսված ծրագրի բյուջեին: |
| | |
| | |

Մ·5/6.6

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

——————— 2015 թվականի N Մ- -Ա Մ·5/6.7

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-927-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի ապրիլի 16-ի N ԱԿ/15/4265-15 գրությունը, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-927-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2015 թվականի մարտի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2015 թվականի հուլիսի 31-ը » բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 927 -Ա

## «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 13-ի N 3/3.8-1/14748-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 13-ի N 02/7065-12, Հայաստանի Հանրապետության և առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N ԴԴ/22/11122-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11918-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02507171) իրականացվող՝ 667888 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Ս.Քրմոյանի կողմից
«06» 11 2012թ.

ԱՆ-5/6.7

«Առողջապահական համակարգի հզորացում»

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Առողջապահական համակարգի հզորացում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է, ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» համաձայն օգտվել ԱԱՀ-ի և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վեռներ, Ժնև, Շվեյցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խումբ Կառավարական տուն 3, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն ՀՎՀՀ 02507171 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ մարզերում. Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն. |
| 6 | Ծրագրի բյուջեն | 667 888 (վեց հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր ութսունութ) եվրոյին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Պալիատիվ/ամոքիչ խնամք ստացող հիվանդները, դոնորական արյուն ստացողները, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի բուժմամբ և կանխարգելմամբ զբաղվող բժիշկ/բուժքույրերը, առողջապահության նախարարությունն և բուժհաստատությունները: |

15/1

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2015 թվականի մարտի 31-ը: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն ծրագիրը հանդիսանում է 2010 թ.-ի ապրիլի 30-ի N U282-Ա ծրագրի 2-րդ փուլը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ | |
| | | **Նպատակ 1** | Մշակել Ազգային առողջապահական համակարգի զարգացման հնգամյա ծրագիր և առողջապահական ոլորտի ենթաազմավարական ծրագրեր: |
| | | Նկարագրություն | Մշակել համակարգի զարգացման հնգամյա ծրագիր և առողջապահական ոլորտի ենթառազմավարական ծրագրեր: |
| | | Եռամսյակ IV | 67 447.7 եվրո |
| | | **Ընդհանուր 1 Տարի** | **67 447.7 եվրո** |
| | | Եռամսյակ I | 36 640 եվրո |
| | | Եռամսյակ II | 1 053,3 եվրո |
| | | Եռամսյակ III | 1 053,3 եվրո |
| | | Եռամսյակ IV | 1 053,3 եվրո |
| | | **Ընդհանուր 2 Տարի** | **39 799,9 եվրո** |
| | | Եռամսյակ I | 0 |
| | | Եռամսյակ II | 0 |
| | | Եռամսյակ III | 0 |
| | | Եռամսյակ IV | 0 |
| | | **Ընդհանուր 3 Տարի** | 0 |
| | | Եռամսյակ I | 0 |
| | | **Ընդհանուր 4 Տարի** | 0 |
| | | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **107 247.6 եվրո** |
| | | **Նպատակ 2** | Փորձարկել և ազգային առողջապահական համակարգում ներդնել պալիատիվ/ամոքիչ խնամք: |
| | | Նկարագրություն | Պիլոտային տեղամասերում փորձարկել պալիատիվ /ամոքիչ խնամք, մշակել պալիատիվ խնամքի ներդրման առաջարկություններ, կազմակերպել ամոքիչ խնամքին նվիրված կրթական դասընթացներ բժիշկ/բուժքույրերի համար: |
| | | Եռամսյակ IV | 32 209 եվրո |
| | | **Ընդհանուր 1 Տարի** | **32 209 եվրո** |
| | | Եռամսյակ I | 19 573 եվրո |

15/1

| | | |
|---|---|---|
| | Եռամսյակ II | 8 913 եվրո |
| | Եռամսյակ III | 14 513 եվրո |
| | Եռամսյակ IV | 13 913 եվրո |
| | **Ընդհանուր 2 Տարի** | **56 912 եվրո** |
| | Եռամսյակ I | 9 513 եվրո |
| | Եռամսյակ II | 0 |
| | Եռամսյակ III | 5 000 եվրո |
| | Եռամսյակ IV | 5 000 եվրո |
| | **Ընդհանուր 3 Տարի** | **19 513 եվրո** |
| | Եռամսյակ I | 0 |
| | **Ընդհանուր 4 Տարի** | 0 |
| | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **108 634 եվրո** |
| | **Նպատակ 3** | Հզորացնել Ազգային առողջապահական տեղեկատվական համակարգը և ինտեգրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի ծրագրերը տեղեկատվական համակարգում: |
| | Նկարագրություն | Մշակել առողջապահական տեղեկատվական համակարգի զարգացման հնգամյա ծրագիր, հզորացնել առողջապահական տեղեկատվական համակարգի շրջանային կարողությունները, ինտեգրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի ծրագրերը տեղեկատվական համակարգում: |
| | Եռամսյակ IV | 13 490.7 եվրո |
| | **Ընդհանուր 1 Տարի** | **13 490.7 եվրո** |
| | Եռամսյակ I | 2 122.5 եվրո |
| | Եռամսյակ II | 2 170 եվրո |
| | Եռամսյակ III | 2 170 եվրո |
| | Եռամսյակ IV | 2 170 եվրո |
| | **Ընդհանուր 2 Տարի** | **8 632.5 եվրո** |
| | Եռամսյակ I | 2 170 եվրո |
| | Եռամսյակ II | 865 եվրո |
| | Եռամսյակ III | 865 եվրո |
| | Եռամսյակ IV | 0 |
| | **Ընդհանուր 3 Տարի** | **3 900 եվրո** |
| | Եռամսյակ I | 0 |
| | **Ընդհանուր 4 Տարի** | 0 |
| | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **26 023.2 եվրո** |

| | | |
|---|---|---|
| | **Նպատակ 4** | Շարունակել Արյան անվտանգության ազգային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացումը: |
| | Նկարագրություն | Իրագործել Արյան անվտանգության ազգային ռազմավարությունը, մշակել և բաժանել արյան անվարձահատույց դոնորությունը խրախուսող նյութեր, վերազինել մարզային արյան փոխներարկման կայանները և մշակել տեղեկատվական համակարգ: |
| | Եռամսյակ IV | 164 462,8 եվրո |
| | **Ընդհանուր 1 Տարի** | **164 462,8 եվրո** |
| | Եռամսյակ I | 18 867.5 եվրո |
| | Եռամսյակ II | 1 352.5 եվրո |
| | Եռամսյակ III | 2 802.5 եվրո |
| | Եռամսյակ IV | 73 752.5 եվրո |
| | **Ընդհանուր 2 Տարի** | **96 775 եվրո** |
| | Եռամսյակ I | 1 352,5 եվրո |
| | Եռամսյակ I | 1 150 եվրո |
| | Եռամսյակ III | 2 500 եվրո |
| | Եռամսյակ IV | 55 500 եվրո |
| | **Ընդհանուր 3 Տարի** | **60 502,5 եվրո** |
| | Եռամսյակ I | 700 եվրո |
| | **Ընդհանուր 4 Տարի** | **700 եվրո** |
| | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **322 440.3 եվրո** |
| | **Նպատակ 5** | Նպաստել գերակայող հիվանդությունների ՏԲ-ի բուժման համար նախատեսված դեղերի ռացիոնալ կիրառմանը: |
| | Նկարագրություն | Կազմակերպել հակատուբերկուլոզային դեղերի ռացիոնալ կիրառմանը նվիրված քարոզարշավ: |
| | Եռամսյակ IV | 14 757.5 եվրո |
| | **Ընդհանուր 1 Տարի** | **14 757.5 եվրո** |
| | Եռամսյակ I | 2 872.5 եվրո |
| | Եռամսյակ II | 0 |
| | Եռամսյակ III | 0 |
| | Եռամսյակ IV | 0 |
| | **Ընդհանուր 2 Տարի** | **2 872.5 եվրո** |
| | Եռամսյակ I | 0 |
| | Եռամսյակ II | 0 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Եռամսյակ III | 0 |
| | | Եռամսյակ IV | 0 |
| | | **Ընդհանուր 3 Տարի** | 0 |
| | | Եռամսյակ I | 0 |
| | | **Ընդհանուր 4 Տարի** | 0 |
| | | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **17 630 եվրո** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման 4 տարիների ընթացքում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) ստորև նշված ապրանքները ու ծառայությունները.<br>1. Արյան փոխներարկման կայանների վերազինում (բժշկական սարքավորումներ, բժշկական ծախսանյութեր, պահպանման ծախսեր և այլն), դեղեր - 149 554 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 90 112 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 55 178 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); ընդամենը՝ 294 844 եվրոյին համարժեք դրամ<br>2. Ռազմավարություններ և կրթական նյութերի մշակում, ծրագրի փորձարկում - 69 384 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 73 013 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 13 726 եվրոյին համարժեք դրամ (3 տարի), 643 եվրոյին համարժեք դրամ (4 տարի); ընդամենը՝ 156 764 եվրոյին համարժեք դրամ<br>3. Դասընթացների կազմակերպում, հանդիպումներ, թարգմանություն, տեխնիկական աջակցություն - 45 860 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 32 533 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 11 640 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); ընդամենը՝ 90 033 եվրոյին համարժեք դրամ<br>4. Հետազոտություններ, մոնիթորինգային այցեր - 3 870 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 2 615 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 1 088 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); 38 եվրոյին համարժեք դրամ (4 տարի) ընդամենը՝ 7 611 եվրոյին համարժեք դրամ<br>5. Համակարգիչների ձեռք բերում, պահպանման ծախսեր և գրենական պարագաներ - 22 699 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 5 720 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 1 285 եվրոյին համարժեք դրամ (3 տարի), 20 եվրոյին համարժեք դրամ (4 տարի); ընդամենը՝ 29 724 եվրոյին համարժեք դրամ<br>6. Տեղեկատվական նյութերի տպագրություն - 1 000 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 1 000 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 1 000 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); ընդամենը՝ 3 000 եվրոյին համարժեք դրամ | |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական խամեռը | Կազմակերպչական ծախսեր, որոնց ներառում են համակարգող խմբի աշխատավարձերը, հարկերը, համակարգող խմբի գրենական պիտույքներ, կապի և սուփհանդակային ծառայություններ, ադմինիստրատիվ պահպանման ծախսեր, աուդիտորական ծառայություններ - 85 913 եվրոյին համարժեք դրամ: | |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի<br>- ՀՀ ֆինանսների նախարարության<br>- ՀՀ առողջապահության նախարարության<br>- ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ»-ի<br>- ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ.Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն»-ի<br>- ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն»-ի<br>- «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ: | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ ֆինանսների նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: | |

ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար

Հ.Հարությունյան

Կատարող [illegible]
ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ֆինանսական ղեկավար
Հեռ. 54 36 51

Է. [illegible]

15/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

Մ-5/6.7

16.04.15 N ՀԿ/15/4265-15
Ձեր N ________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի (այսուհետ՝ Գլոբալ հիմնադրամ) կողմից ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին 30.11.2012 թվականի թիվ Մ-927-Ա որոշմամբ (ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 26.04.2013 թվականի թիվ Մ-292-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի ժամկետն ավարտվել է սույն թվականի մարտի 31-ին: Ծրագրի հիմնական ժամկետի ավարտից հետո Գլոբալ հիմնադրամի կողմից սահմանվել է ծրագրի փակման շրջան 4 ամիս տևողությամբ՝ սկսած սույն թվականի ապրիլի 1-ից մինչ հուլիսի 31-ը՝ առանց լրացուցիչ ֆինանսավորման հատկացման: Ծրագրի փակումն իրականացվելու է ծրագրի իրականացման տևողության ընթացքում գոյացած խնայողությունների հաշվին:

Ծրագրի փակման շրջանի հատկացման նպատակն է Ծրագրի փակման պլանով նախատեսված բոլոր միջոցառումների իրականացումը, ծրագրի աուդիտի անցկացումը և վերջնական ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը:

Մ-5/6.7

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերոնշյալ ծրագրի ժամկետը երկարաձգել մինչ սույն թվականի հուլիսի 31-ը:

Կից Ձեր ուշադրությանն է ներկայացվում փակման շրջանի սահմանման վերաբերյալ Գլոբալ հիմնադրամի պաշտոնական գրությունը (հայերեն և անգլերեն տարբերակները):

Առդիր՝ 15 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԱՆ ԳՀ ԾԻԳ
Ա. Բերեզովսկայա
Հեռ. 543650

N020/12026-15
16.04.15թ